ИНФОРМАЦИЯ

УДК 61(09).47.925

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՏՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գ.Ա.Նավասարդյան

/Մ. Հերացու անվան ԵՊԲՀ ախտաֆիզիոլոգիայի ամբիոն/
375020 Երևան, Կորյունի, 2

Բանալի բառեր. Գրիգոր Տաթևացի, միջնադարյան բժշկագիտություն, առողջություն, հիվանդություն, պատճառագիտություն, հարմարողականություն, փաստարկում

Բժշկակենսաբանական դիտարկումների իմացական տրամաբանության պարզաբանումը ծառայել է որպես միջոց, օգնելով հայ միջնադարյան փիլիսոփաներին մշակելու ճանաչողության տեսության հիմքերը և այն բարձրացնելու նոր, իրենց ժամանակի համար առաջադիմական աստիճանի: Միաժամանակ այն նպաստել է Հայաստանում բժշկագիտական մտքի զարգացմանը, գործնական բժշկության տեսական հիմնավորմանը [1–6]: Այդ առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում XIII–XIV դարերի հայ ականավոր փիլիսոփա Գրիգոր Տաթևացու աշխատությունների ուսումնասիրությունը: Հարկ է նշել, որ Տաթևացու երկասիրություններում տեղ գտած բժշկագիտական նյութերը և փաստարկման, և բժշկագիտության տեսության զարգացման մեջ ունեցած դերի առումով ուշադրության գրեթե չեն արժանացել: Նրա աշխատություններում մի շարք հեղինակների կողմից վերոհիշյալ նյութերը արժեքավորվել են հիմնականում միջնադարյան Հայաստանում մեթոդաբանության, կենսաբանության և բժշկության զարգացման պատմության տեսանկյունից և վերաբերում են մարդակազմության, կենսաբանության, հոգեբանության, սաղմնաբանության խնդիրներին [7,15]: Մինչդեռ, մեր կարծիքով, Տաթևացին հայ մշակույթի այն հսկաներից է, որի ժառանգությանը յուրաքանչյուր անդրադարձ նոր նյութ ու բովանդակություն է տալիս միջնադարյան հայ փիլիսոփայական հայացքներին, դրանով իսկ հստակեցնում Հայաստանում XIII-XIV դարերի գիտական մտքի զարգացման մակարդակի մասին մեր պատկերացումները:

Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական, ճանաչողական հայացքները, դրանց հիմնավորման նպատակով հաճախ և փաստարկման ձևով բերված բժշկակենսաբանական նյութերը արտացոլված են նրա հիմնական երկասիրություններում՝ «Գիրք հարցմանց», «Ամառան հատոր», «Ձմեռան հատոր» ձեռագրերում:

Ակադեմիկոս Սեն Արևշատյանի խոսքերով՝ «Տաթևացու փիլիսոփայության մեջ աստվածաբանական կեղևի տակ զգացվում է անտիկ փիլիսոփայական մտքի շունչը, իսկ էմպիրիկ-սենսուալիստական և մատերիալիստական տենդենցները

վկայում են նրա՝ միջնադարյան սխոլաստիկայի քարացած շրջանակներից դուրս գալու մասին»:

Սա ասվել է տարիներ առաջ, երբ մեզանում հայ փիլիսոփայության պատմությունը դիտարկվում էր մեթոդաբանական որոշակի կաղապարների շրջանակներում: Այսօր Տաթևացու (և ոչ միայն նրա) փիլիսոփայական-տեսական հայացքների գնահատումը մեթոդաբանական նոր, ժամանակակից սկզբունքների և կողմնորոշիչների բեկմամբ վերանայման կարիքն ունի, քանզի Հայաստանում անկախ պետականության կերտման գործընթացը ինքնին առաջ է քաշում հայոց մշակույթի, նրա անխախտելի մասի՝ գիտության պատմության նորովի իմաստավորման խնդիրները:

Մի կողմ թողնելով Տաթևացու փիլիսոփայական հայացքների վերագնահատման հարցը, ներկայացվող հոդվածում փորձ է արվել դրանցում վերհանել հեղինակի կողմից, որպես հիմնավորման միջոց արծարծած բժշկակենսաբանական նյութերը, նրանց կապը ախտաբանության տեսության կազմավորման հետ: Այդ նյութերի վերլուծությունը կօգնի մեզ արժեքավորել միջնադարյան Հայաստանում (մասնավորապես XIII-XIVդարերում) նոզոլոգիայի հիմնադրույթների զարգացման, բժշկա-բնագիտական մտածողության մակարդակը: Կողք-կողքի դնելով Տաթևացու չափորոշիչները, երևույթների գնահատման նրա բանալիները, պարզորոշ է դառնում հեղինակի նշանակալի ներդրումը ոչ միայն փիլիսոփայության, այլև բժշկագիտության հիմնախնդիրների մշակման գործընթացում: Նրա սահմանումները, գիտական ընդհանրացումները որոշակի ազդեցություն ունեցան բժշկության տեսական մտքի հետագա զարգացման վրա և այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքը: Մանրամասնենք մեր քննախոսությունը՝ գնահատելով հեղինակի ուսումնասիրությունները ընդհանուր ախտաբանության հիմնահարցերի շրջանակում:

Ինչպես հայտնի է, բժշկության տեսական խնդիրներից գլխավորը առողջության և հիվանդության սահմանման խնդիրն է: Իր «Գիրք հարցմանց» հայտնի մատյանում, որը մեր կարծիքով, իր կառուցվածքով փաստարկման մեթոդաբանական մի յուրօրինակ արտահայտություն է, նա այսպես է սահմանում «հիվանդություն» հասկացությունը՝ «... Եվ կա չար, որը բարեխառն է և էությունից է գոյանում, ինչպես հիվանդությունը առողջությունից, ապականությունը՝ մարմնից: Զի առողջության նվազումից հիվանդությունն է երևում, և մարմնի տկարությունից ապականությունն է պատահում»: Ապա ավելացնում է՝ «...Եվ գիտցիր այս, որքան նվազի առողջությունը, կհավելվի հիվանդությունը, և որքան մարմինը նվազի, կհավելվի ապականությունը: Իսկ երբ ամենևին նվազի առողջությունը և հիվանդությունը կկորչի: Այսպես և ապականությունը»: Հեղինակի կարծիքով՝ «...Զի նրանց գոյության էությունը հակադրության մեջ է...»:

Եթե չանդրադառնանք Տաթևացու ձեռագիր փաստական հարուստ նյութերում տեղ գտած բժշկագիտական այլ արժեքներին, հիշյալ մեջբերման վերլուծությունն իսկ բավարար է՝ արձանագրելու միջնադարյան հայ բժշկագիտական մտածողության որոշակի բարձր մակարդակը, նրա յուրատիպությունը:

Համադրությային առումով ի սկզբանե ճիշտ է հեղինակի մոտեցումը այդ երկու «հակադիր» հասկացություններին. հիվանդությունը համարելով «բարեխառն», նա մատնանշում է հիվանդության և առողջության ամբողջականությունը («էությունից է»), որից հասկանալի է դառնում, որ հիվանդությունը զուտ «չարից» չի կազմվում, այն «բարեխառն» է, այսինքն իր մեջ կրում է նաև առողջածնական բաղադրյալներ

(մեխանիզմներ): Եթե ասվածը մտովի համեմատենք հիվանդության ժամանակակից բնորոշումների հետ, ապա ակնբախ կդառնա մոտեցման ընդհանրությունը. այսօր էլ հիվանդությունը դիտվում է որպես ախտաբանականի և ֆիզիոլոգիականի փոխհարաբերության քանակական և որակական նոր դրսևորում: Կարևոր է նաև այն, որ ըստ Տաթևացու դիտողության, հիվանդության զարգացումը, ինչպես նաև մարմնի վնասումը («ապականություն») կախված են երկու հակադիր կողմերի հարաբերակցությունից, օրգանիզմի վիճակից (այսօրվա եզրաբանությամբ՝ ռեակտիվականությունից):

Գրիգոր Տաթևացու երկերում տեղ գտած բժշկակենսաբանական հայացքները որոշակի աղերսներ են դրսևորում նոզոլոգիայի այլ հիմնադրույթների հետ:

Հիվանդության մասին ուսմունքը սկիզբ է առնում դարերի խորքից: Յուրաքանչյուր քաղաքակրթություն իր ժամանակի գիտության զարգացման մակարդակի համեմատ ստեղծել է ուսմունք հիվանդության և առողջության մասին: Այսօր էլ ախտաբանության տեսության հիմնադրույթների հանդեպ տարբեր մոտեցումներ են դրսևորվում, շատ հարցեր էլ վիճաբանական են: Մշտական քննության առարկա են բժշկության մեջ պատճառագիտության, ախտածնության, հիվանդության և հարմարվողական շարժընթացների հարաբերակցության, վնասման և օրգանիզմի ռեակտիվականության դերի, առողջության և հիվանդության կապի հարցերը [10-19]: Ինչպիսի՞ն են Տաթևացու մոտեցումներն այս հիմնախնդիրներին:

Գրիգոր Տաթևացու երկերում վերագտնված են անտիկ գիտության ավանդները: Ինչպես ճշգրտորեն նկատել է Ս.Վարդանյանը, Տաթևացու երկերում կենսաբանական և բժշկագիտության հարցերին վերաբերող մտքերը «շարադրված են հին և միջնադարյան հեղինակների ոգով»: Այո, ոգին կարծես նույնն է՝ հիվանդությունը դիտվում է որպես չորս նյութերի (հեղուկների) խաթարման, նրանց համամասնության խանգարման հետևանք, սակայն հեղինակի դիտողությունները բժշկագիտական տեսական հարցերի շուրջ՝ նաև նորովի են, եղած պատկերացումներից զանազանվող մտքեր են պարունակում:

Տաթևացին, ելնելով փիլիսոփայական այն դրույթից, որ «բնության մեջ ամենայն ինչ, որ էությունից է, սկիզբ ունի ու պատճառ», համոզմունք է հայտնում, որ շատ երևույթներ հակակշռված են: Ըստ նրա «հակադրությունները չորսն են՝ առնչական, ինչպես մեծը և փոքրը, պակասական, ինչպես ունակությունը և պակասությունը, ներհակական, ինչպես ջերմն ու ցուրտը, հակասական, ինչպես հաստատումն ու բացասումը»: Հեղինակի սահմանումը ցույց է տալիս, որ հիվանդությունը նա դիտարկում է երկրորդ տիպի հակադրության շրջանակում: Մեր ուսումնասիրությունների արդյունքները վկայում են նաև այն մասին, որ Տաթևացին արծարծել է տեսական բժշկության մի շատ կարևոր, սակայն դեռևս զգալիորեն կնճռոտ հարցը՝ պատճառականության հիմնախնդիրը: Ուշագրավ է, որ պատճառականության հարցը քննարկելիս, հեղինակը չի առանձնացնում առողջության և հիվանդության հասկացությունները, այլ դրանք քննում է միաժամանակ, մի ամբողջության մեջ: Նշենք, որ բժիշկ տեսաբանների, փիլիսոփաների կողմից այսօր էլ այդ երկու հասկացությունները չեն տարանջատվում, դիտվում են մի հարթության վրա, քանզի ակնհայտ է, որ հիվանդության մասին որևէ ուսմունքի մշակումն անհնար է առանց մարդու առողջության մասին ամբողջական և հստակ սահմանում ունենալու:

Մեր հեղինակը գտնում է, որ «մարդ կենդանի և գոյ է», որի և առողջությունը, և հիվանդությունը ունեն իրենց պատճառները: Հիվանդության և առողջ վիճակի պատճառները Տաթևացին համարում է «չորս տարրերի չարախառն կամ բարեխառն գոյությունը»: Նկատենք, որ վերջին արտահայտությունում նա մեկ այլ տեսանկյունից է անդրադարձել հիվանդության և առողջության բնորոշմանը: Ըստ նրա՝ առողջությունը «չորս տարրերի բարեխառն վիճակն է», այսինքն՝ համակշռված, համամասնական հարաբերակցությունը: Եթե հեղինակի այս սահմանումը համեմատենք Առողջապահության համաշխարհային կազմակերպության բնորոշման հետ՝ «Առողջությունը մարդու ֆիզիկական, հոգևոր, սոցիալական բարվոք վիճակն է (բարօրությունը)», ապա ակնհայտ է դառնում, որ դեռևս XIII դարում մեր ականավոր մտածողը առողջությունը բարեխառն վիճակ համարելով, օրգանիզմի բարվոքությունն է ընդգծել (նույնիսկ եզրույթները ընդհանրություն են պարունակում): Հիվանդությունն էլ «չարախառն վիճակ» համարելով, հեղինակը ընդգծում է նրա ժամանակ օրգանիզմում հավասարակշռության խաթարման, վնասումների ի հայտ գալու դերը:

Փաստորեն միջնադարյան մեր երևելի գիտնականը հիվանդության ախտածնությանը վերաբերող տեսական հայացքներում ներկայումս այնքան կարևորվող սանոգենետիկ (առողջածնական) մեխանիզմների դերը ևս արծարծել է, տալով հիվանդության յուրատիպ սահմանում «Հիվանդությունը ողջությունից է գոյանում, այն երևան է գալիս առողջության նվազումից, որքան նվազի առողջությունը, կհավելվի հիվանդությունը»: Այս միտքը փաստում է նոզոլոգիայի ևս մի կարևոր դրույթի առկայությունը Տաթևացու մտածողությունում. առողջությունը և հիվանդությունը կյանքի («ողջության») երկու կողմերն են, մեկի պակասը մյուսի հավելմանն է բերում: Իրեն հետաքրքրող հարցերի քննության ընթացքում Տաթևացին, «որպես իր ժամանակի խոշորագույն բնագետ և նոմինալիստ փիլիսոփա», առաջ է քաշել նաև բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև մարդու սաղմի աստիճանական զարգացման տեսակետը: Եթե նկատի ունենանք, որ ընդհանուր նոզոլոգիայի հիմնախնդիրներից է համեմատական-էվոլյուցիոն ասպեկտը, ըստ որի կենդանի էակների կազմակերպման բարդացմանը զուգընթաց՝ բարդանում, բազմակերպ են դառնում ախտաբանական շարժընթացների արտահայտություններն ու մեխանիզմները, մեր ձեռքի տակ եղած նյութի հիման վրա հնարավոր է ենթադրել, որ Տաթևացու բնագիտա-բժշկաբանական վաստակում տեղ է գտել նաև, ճիշտ է՝ անուղղակիորեն, բժշկագիտական վերոհիշյալ տեսական թեզը: Նա գրում է. «Եվ այս կազմողական զօրութեանն է, որ նախ պատրաստ է զնիւթ առ կեանքն և ապա, իզգայութիւնն, և ապա ի բնաւորութիւնն: ...Եվ մանավանդ զի բնութիւնն յանկարծակի ոչ կարէ ներգործել, այլ սակաւ հետևելով, յան կատարէն ելանէ ի կատարեալն»:

Հիվանդության մասին ուսմունքի քննարկման առարկա հանդիսացող դրույթներից է նաև ախտաբանական գործընթացի և օրգանիզմի հարմարողականության հարաբերակցության հարցը: Անտիկ փիլիսոփաների օրինակով Տաթևացին ևս անդրադարձել է հարմարողա-կանության գաղափարին և նրա կարևորագույն արտահայտությանը՝ օրգանիզմների կառուցվածքի և ֆունկցիաների նպատակահարմարությանը: Այս հարցում նույնպես հեղինակի պատկերացումը իր էական մասով համընկնում է արդիական ըմբռնումներին: Նա գտնում էր, որ մարդը, իր բանականության (գլխուղեղի և նրա «սպասավորները» հանդիսացող հինգ

զգայարանների միջոցով) շնորհիվ կարողանում է ընկալել և ճանաչել իրեն շրջապատող աշխարհը, կողմնորոշվել իր գործողություններում: Նա համոզված է, որ մարդը կենդանական աշխարհի իշխանն է, իսկ նրա կառուցվածքը նպաստում է մտածողությանը և աշխատանքին: Տաթևացին այսպես է ներկայացնում իր դրույթը. «Մարդը բոլոր կենդանիների տերն է և իշխանը, զի կենդանիները ունեն վարիակ գլուխներ, ինչպես ծառաներն ու ճորտերը, իսկ մարդու մոտ այն վեր է բարձրանում, ինչպես թագավորի ու իշխանի մոտ: Գլուխը բարձր է, որպեսզի լեզուն ու ձեռքերը ծառայեն մտածողությանը և աշխատանքին»:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ Գրիգոր Տաթևացու բժշկակենսաբանական հայացքները (մեծամասամբ փաստարկների ձևով) կարևոր ներդրում հանդիսացան ժամանակի ինչպես փիլիսոփայական, այնպես էլ բժշկագիտական տեսական մտքի զարգացման մեջ և շատ կողմերով կամրջվում են նոզոլոգիայի հիմնադրույթների ժամանակակից պատկերացումների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Գրիգորիս* Քննություն բնութեան, մարդոյ և նորին ցաւոց: Երևան, 1962:
2. Գրիգոր Լուսավորչի հաճախապատում ճառք լուսավորք, Վաղարշապատ: 1894-96:
3. *Գրիգոր Տաթևացի* Գիրք հարցմանց: 1389:
4. *Դավիթ Անհաղթ* Երկասիրութիւնք փիլիսոփայականք: Երևան, 1980.
5. *Եզեկայ Կոդրացի* Եղծ աղանդոց: Վենետիկ, 1832:
6. *Կծոյան Ա. Ս.* Բժշկագիտությունը Հայաստանում: Երևան, 1968:
7. *Տեր-Պողոսյան Ավ.* Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում: Երևան, 1960:
8. *Վարդանյան Ս.* Բժշկությունը հին և միջնադարյան Հայաստանում: Երևան, 1982:
9. *Адо А. Д.* Вопросы общей нозологии. Москва, 1985.
10. Аспекты адаптации. Сб. трудов Горьк. мед. инст., 1977.
11. *Бауэр Э. С.* Теоретическая биология. М.-Л., 1935.
12. *Давыдовский И. В.* Философские основы патологии. Арх. патологии, 1969, 6, с. 3.
13. *Лисицин Ю. П.* Здоровье населения и современные теории медицины. М., 1982.
14. *Оганесян Л. А.* История медицины в Армении. т. 1-4, Ереван, 1946-48.
15. *Петленко В. П.* Философские вопросы теории патологии. М., Медицина, т. 1, 1968.
16. *Сиротинин Н. Н.* О понятии "болезнь". Некот. философск. вопросы мед. и естествознания. Киев, 1957, с. 63.
17. *Lee Goldman* Количественные аспекты клинического мышления в кн.: Harrison's Principles of Internal Medicine. M.,1993.
18. *Riese W.* The conception of the disease - its history, its versions and its nature. New York, 1953.
19. *Sodeman's* Pathologic physiology. New York, 1985.